Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-569-26.04.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 169.32 հոդվածով.

«Հոդված 169.32.	Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների պահպանում իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախատեսված հաշվետվությունները սահմանված ժամկետներում և կարգով չներկայացնելը

1. Ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկում ներառված ապրանքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի հաշվետվությունները ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների պահպանում իրականացնող կազմակերպությունների կողմից նյութական պահուստի պահպանման և սպասարկման ոլորտի լիազոր մարմնին սահմանված ժամկետներում կամ կարգով չներկայացնելը կազմակերպության համար՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախազգուշացումից հետո 5 օրվա ընթացքում հաշվետվությունները չներկայացնելն առաջացնում է տուգանք՝

1) կազմակերպության (բացառությամբ՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված, կազմակերպության կողմից կուտակման և պահպանման ենթակա ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝

սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելն առաջացնում է տուգանք՝

1) կազմակերպության (բացառությամբ՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված, կազմակերպության կողմից կուտակման և պահպանման ենթակա ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ապրանքների արժեքի 20 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝

սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 213.2. հոդվածի 5-րդ մասում՝

1) «նախազգուշացում:» բառը փոխարինել «տուգանք՝» բառով և լրացնել նոր կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1) կազմակերպության (բացառությամբ՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած, ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված չկուտակված ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 30 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը՝ 100 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝

չկուտակված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը՝ չկուտակված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:»,

2) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում զորահավաքային կամ ռազմավարական պաշարների պահուստի պակասորդ կամ ինքնակամ օգտագործված ապրանքները նյութական պահուստում չվերականգնելն առաջացնում է տուգանք՝

1) կազմակերպության (բացառությամբ՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված, ռազմավարական պաշարների պակասորդ կամ ինքնակամ օգտագործված ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չվերականգնելը՝ 100 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝

չվերականգնված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չվերականգնելը՝ չվերականգնված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:»,

4) 9-րդ մասում «պահուստում» բառից հետո լրացնել «կամ ռազմավարական պաշարների պահուստում» բառերը:

5) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում զորահավաքային պահուստում կամ ռազմավարական պաշարների պահուստում հաստատված անվանացանկին, տեխնիկական պայմաններին և սահմանված որակական հատկանիշներին համապատասխանող ապրանքներ չամբարելը, ինչպես նաև պահպանման սահմանված ժամկետը լրացած ապրանքները չփոխարինելը առաջացնում է տուգանք՝

1) կազմակերպության (բացառությամբ՝ դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ամբարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝

այն ապրանքների ձեռքբերման արժեքի 10 տոկոսի չափով, որոնց մասով թույլ են տրվել այդ խախտումները, իսկ 30 օրվա ընթացքում չամբարելը կամ ապրանքները չփոխարինելը՝ 100 տոկոսի չափով.

2) դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ամբարելու պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝

չամբարված կամ չփոխարինված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չամբարելը կամ չփոխարինելը՝ չամբարված կամ չփոխարինված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:»:

6) 10-րդ մասից հետո լրացնել նոր 11-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Սույն հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կամ 10-րդ մասերով նախատեսված արարքները վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սույն հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կամ 10-րդ մասերում նշված ապրանքների արժեքի 300 տոկոսի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասում «169.8-րդ հոդվածներով,» բառերից հետո լրացնել «,169.32-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղերի կամ բժշկական արտադրատեսակի մասով), 2-րդ մասի 2-րդ կետով և 3-րդ մասի 2-րդ կետով,» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասում «46-րդ մասով (32-րդ մասով նախատեսված արարքներից որևէ մեկը կրկին կատարելու մասով),» բառերից հետո լրացնել «169.32-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով), 2-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով) և 3-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով),» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1–ին մասում «46-րդ մասերով (բացառությամբ 32-րդ մասով նախատեսված արարքներից որևէ մեկը կրկին կատարելու մասով),» բառերից հետո լրացնել «169.32-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ոչ պարենային ապրանքների մասով), 2-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ոչ պարենային ապրանքների մասով) և 3-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ոչ պարենային ապրանքների մասով),» բառերը:

Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները դեղերի մասով կկիրառվեն ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ ներմուծող և կուտակման ու

պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների կողմից ներկայացվող ռազմավարական պաշարներ հանդիսացող ապրանքների մնացորդի և շարժի վերաբերյալ հաշվետվությունների ձևն ու լրացման կարգը Կառավարության կողմից հաստատելուց հետո:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված Կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

~~ՆԱԽԱԳԻԾ~~
~~Կ-569-26.04.2023-ՊԱ-011/0~~

Կ-569-26.04.2023-ՊԱ-011/1 **Լրամշակված նախագիծ**
Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

~~ՕՐԵՆՔԸ~~

Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ 169.32 հոդվածով.

«Հոդված 169.32.	Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների պահպանում իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախատեսված հաշվետվությունները սահմանված ժամկետներում և կարգով չներկայացնելը

1. Ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկում ներառված ապրանքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ~~ձեւի~~ձևի հաշվետվությունները ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ~~կուտակում եւ~~ պահպանում իրականացնող

կազմակերպությունների կողմից նյութական պահուստի պահպանման ~~եւ~~և սպասարկման ոլորտի լիազոր մարմնին սահմանված ժամկետներում կամ կարգով չներկայացնելը կազմակերպության համար՝~~-~~՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախազգուշացումից հետո 5 օրվա ընթացքում հաշվետվությունները չներկայացնելն առաջացնում է տուգանք՝՝

1) կազմակերպության (բացառությամբ՝՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված, կազմակերպության կողմից կուտակման ~~եւ~~և պահպանման ենթակա ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ապրանքների ~~գումարի~~արժեքի 10 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝՝

սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

3. Սույն հոդվածի ~~1-ին~~2-րդ մասով նախատեսված արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելն առաջացնում է տուգանք՝՝

1) կազմակերպության (բացառությամբ՝՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված, կազմակերպության կողմից կուտակման ~~եւ~~և պահպանման ենթակա ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ապրանքների ~~գումարի~~ արժեքի 20 տոկոսի չափով.

2) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝~~-~~՝

սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով~~։»։~~։»։

Հոդված 2. ~~Օրենսգրքի 42.1. հոդվածի 1-ին մասում «հանձնարարականները չկատարելը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման շրջանակներում տրվող հանձնարարականների)» բառերը։~~

~~*Հոդված 3.*~~ Օրենսգրքի 213.2. հոդվածի 5-րդ մասում՝~~-~~՝

1~~)~~) «նախազգուշացում։» բառը փոխարինել «տուգանք՝~~»~~՝» բառով ~~եւ~~և լրացնել նոր կետերով՝ ~~հետեւյալ~~՝ հետևյալ բովանդակությամբ.

«1~~)~~) կազմակերպության (բացառությամբ՝~~-~~՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝~~-~~՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած, ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված չկուտակված ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 30 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը՝~~-~~՝ 100 տոկոսի չափով.

2~~)~~) ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար~~:~~՝

չկուտակված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական ~~նշանակության գույքի~~արտադրատեսակի համար~~:~~՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ~~-~~ 30 օրվա ընթացքում առաջադրանքը չկատարելը~~:~~՝ չկուտակված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական ~~նշանակության գույքի~~արտադրատեսակի համար~~:~~՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի~~-~~ չափով~~:»,~~:»,

2~~)~~) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3~~)~~) 8-րդ մասը շարադրել ~~հետեւյալ~~հետևյալ խմբագրությամբ~~.~~.

«8~~.~~. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո~~:~~՝ 15 օրվա ընթացքում զորահավաքային կամ ռազմավարական պաշարների պահուստի պակասորդ կամ ինքնակամ օգտագործված ապրանքները նյութական պահուստում չվերականգնելն առաջացնում է տուգանք~~:~~՝

2) ~~1)~~ կազմակերպության (բացառությամբ~~:~~՝ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար~~:~~՝

ազգային վիճակագրական համակարգի գլխավոր պետական մարմնի հրապարակած ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների ներմուծման տարվա միջին գնով հաշվարկված, ռազմավարական պաշարների պակասորդ կամ~~-~~ ինքնակամ օգտագործված ապրանքների արժեքի 10 տոկոսի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չվերականգնելը~~:~~՝ 100 տոկոսի չափով.

3) ~~2)~~ ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպության համար~~:~~՝

չվերականգնված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական ~~նշանակության գույքի~~արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չվերականգնելը՝ չվերականգնված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական ~~նշանակության գույքի~~արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով~~։»,~~:»,

4~~)~~) 9-րդ մասում «պահուստում» բառից հետո լրացնել «կամ ռազմավարական պաշարների պահուստում» բառերը:

5~~)~~) 10-րդ մասը շարադրել ~~հետեւյալ~~ հետևյալ խմբագրությամբ~~.~~ .

«10~~.~~. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված նախազգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում զորահավաքային պահուստում կամ ռազմավարական պաշարների պահուստում հաստատված անվանացանկին, տեխնիկական պայմաններին ~~եւ~~և սահմանված որակական հատկանիշներին համապատասխանող ապրանքներ չամբարելը, ինչպես ~~նաեւ~~նաև պահպանման սահմանված ժամկետը լրացած ապրանքները չփոխարինելը առաջացնում է տուգանք՝

3) ~~1)~~ կազմակերպության (բացառությամբ՝ դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ամբարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների) համար՝

այն ապրանքների ձեռքբերման արժեքի 10 տոկոսի չափով, որոնց մասով թույլ են տրվել այդ խախտումները, իսկ 30 օրվա ընթացքում չամբարելը կամ ապրանքները չփոխարինելը՝ 100 տոկոսի չափով.

4) ~~2)~~ դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ամբարելու պարտավորություն ունեցող կազմակերպության համար՝

չամբարված կամ չփոխարինված յուրաքանչյուր անվանում դեղի կամ բժշկական ~~նշանակության գույքի~~արտադրատեսակի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ 30 օրվա ընթացքում չամբարելը կամ չփոխարինելը՝ չամբարված կամ չփոխարինված յուրաքանչյուր անվանում դեղի

կամ բժշկական ~~նշանակության գույքի~~արտադրատեսակի համար՝՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի՝ չափով~~։»։~~։»։

6~~)~~) 10-րդ մասից հետո լրացնել նոր 11-րդ մաս՝՝ ~~հետևյալ~~՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Սույն հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կամ 10-րդ մասերով նախատեսված արարքները վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սույն հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կամ 10-րդ մասերում նշված ապրանքների արժեքի 300 տոկոսի չափով։»։

Հոդված ~~4.~~ 3. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասում «169.8-րդ~~» թվից~~ հոդվածներով,» բառերից հետո ~~ավելացնել~~լրացնել «,169.32-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղերի կամ բժշկական ~~նշանակության գույքի~~արտադրատեսակի մասով), 2-րդ մասի 2-րդ կետով ~~եւ~~և 3-րդ մասի 2-րդ կետով~~» թվերը եւ~~,» բառերը~~։~~։

Հոդված ~~5.~~ 4. Օրենսգրքի ~~238[2]-րդ հոդվածում «եւ քառասունյոթերորդ մասերով,»~~ 238-րդ հոդվածի 1-ին մասում «46-րդ մասով (32-րդ մասով նախատեսված արարքներից որևէ մեկը կրկին կատարելու մասով),» բառերից հետո ~~ավելացնել~~լրացնել «169.32-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի ~~եւ~~և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով), 2-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի ~~եւ~~և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով) ~~եւ~~և 3-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի ~~եւ~~և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով~~)» թվերը եւ~~),» բառերը~~։~~։

Հոդված ~~6.~~ 5. Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1-~~–~~ին մասում «~~40-45~~ 46-րդ մասերով~~,»~~ (բացառությամբ 32-րդ մասով նախատեսված արարքներից որևէ մեկը կրկին կատարելու մասով),» բառերից~~-~~ հետո ~~ավելացնել~~լրացնել «169.32-րդ հոդվածի 1-

ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ոչ պարենային ապրանքների մասով), 2-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ոչ պարենային ապրանքների մասով) ~~եւ~~և 3-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող ոչ պարենային ապրանքների մասով)~~» թվերը եւ~~),» բառերը~~։~~:

Հոդված ~~7.~~ 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները դեղերի մասով կկիրառվեն ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական ~~նշանակության գույք~~արտադրատեսակ ներմուծող ~~եւ~~և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների կողմից ներկայացվող ռազմավարական պաշարներ հանդիսացող ապրանքների մնացորդի ~~եւ~~և շարժի վերաբերյալ հաշվետվությունների ~~ձեւն~~ձևն ու լրացման կարգը Կառավարության կողմից հաստատելուց հետո:

~~*Հոդված 8.*~~ 3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված Կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքն ուժի մեջ ~~է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից եւ դրա գործողությունը տարածվում է ուժի մեջ~~ մտնելուց հետո~~ ծագած հարաբերությունների վրա։~~՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-569-26.04.2023-ՊԱ-011/1) ԵՎ «ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-569[1]-26.04.2023-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ					
1	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող նոր՝ 169.32-րդ հոդվածում հոդվածի համարը տեքստից առաջարկվում է բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված կանոնը:	Ընդունվել է Հոդվածի համարը տեքստից բաժանվել է միջակետով	Ընդունվել է
2	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ	Նախագծի 1-ին հոդվածի վերնագրից և 1-ին մասից առաջարկվում է «կուտակում և» բառերը հանել՝ սահմանված կարգավորումը «Նյութական պահուստի մասին»	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող	Ընդունվել է

		և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդված	օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանված ձևակերպմանը համապասխանեցնելու նպատակով:	նոր՝ 169.32-րդ հոդվածի վերնագրից և 1-ին մասից «կուտակում և» բառերը հանվել են:	
3	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ	Նախագծի ամբողջ տեքստում «բժշկական նշանակության գույք» բառերն առաջարկվում է փոխարինել «բժշկական արտադրատեսակ» բառերով՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում կիրառվող հասկացություններին համապատասխանեցնելու նպատակով:	Ընդունվել է Նախագծի ամբողջ տեքստում «բժշկական նշանակության գույք» բառերը փոխարինվել են «բժշկական արտադրատեսակ» բառերով:	Ընդունվել է
4	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքին նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում և 3-րդ մասի 1-ին կետում «ապրանքների գումարի» բառակապակցությունն առաջարկվում է փոխարինել «ապրանքների արժեքի» բառակապակցությամբ՝ ինչպես զուտ մասնագիտական առումով ճիշտ հասկացության սահմանման, այնպես էլ ամբողջ տեքստում նույն հասկացությունը միասնական տեսքով օգտագործելու նկատառումներով:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում և 3-րդ մասի 1-ին կետում «ապրանքների գումարի» բառերը փոխարինվել են «ապրանքների արժեքի» բառերով:	Ընդունվել է
5	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի	Առաջարկվում է 1-ին հոդվածի 3-րդ մասում «1-ին» թիվը փոխարինել «2-րդ» թվով, հստակեցնելու համար, թե	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում	Ընդունվել է

		Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	3-րդ մասով նախատեսված կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ նշված արարքը կատարելը արարքի որերորդ կատարմանն է առնչվում:	«1-ին» թիվը փոխարինվել է «2-րդ» թվով:	
6	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդված	1 Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածը հանել: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 25 10 2023թ ՀՀ Ազգային ժողովի կողից ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը, որով ուժը կորցրած է ճանաչվել Օրենսգրքի 42 1-ին հոդվածը: 2 #Նախագծի 2-րդ հոդվածը հանելու հետ կապված՝ վերանայել նաև համարակալումը:	Ընդունվել է Նախագծի 2-րդ հոդվածը հանվել է: Համարակալումը վերանայվել է, 3-րդ հոդվածը դարձել է 2-րդ, 4-րդը՝ 3-րդ, 5-րդը՝ 4-րդ, 6-րդը՝ 5-րդ, 7-րդը՝ 6-րդ:	Ընդունվել է
7	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ կետում առաջարկվում է «մաս» բառից առաջ նշել նաև լրացվող մասի համարը, այն է՝ «11-րդ»:	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ կետում «մաս» բառից առաջ լրացվել է «11-րդ» թիվը:	Ընդունվել է
8	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության	Ինկորպորացիայի արդյունքում խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածում «169.8-րդ» թվից» բառերը	Ընդունվել է Հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է

		օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 4-րդ հոդված	փոխարինել «169.8-րդ հոդվածներով,» բառերից» բառերով: Նույն հոդվածում «ավելացնել» բառը առաջարկվում է փոխարինել «լրացնել» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, իսկ «կետով» թվերը և» բառերը առաջարկվում է փոխարինել կետով,» բառով՝ տեխնիկական շտկումներ կատարելու անհրաժեշտությունից ելնելով:		
9	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 5-րդ հոդված (նախագծի լրամշակված տարբերակը դարձել է 4-րդ հոդված)	1 Նախագծի 5-րդ հոդվածում առաջարկվում է «Օրենսգրքի 238[2.] -րդ հոդվածում «և քառասունյոթերորդ մասերով,» բառերից հետո ավելացնել» բառերն առաջարկվում է փոխարինել «Օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասում 46-րդ մասով (32-րդ մասով նախատեսված արարքներից որևէ մեկը կրկին կատարելու մասով), բառերից հետո լրացնել» բառերով: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 25 10 2023թ ՀՀ Ազգային ժողովի կողից ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը, որով ուժը կորցրած է	Ընդունվել է Հոդվածը խմբագրվել է: Համարակալումը վերանայվել է:	Ընդունվել է

			ճանաչվել Օրենսգրքի 238[2.] -րդ հոդվածը: 2 # Նախագծի 5-րդ հոդվածում կատարվող փոփոխության հետ կապված՝ վերանայել նաև համարակալումը:		
10	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 6-րդ հոդված (նախագծի լրամշակված տարբերակը դարձել է 5-րդ հոդված)	1 Նախագծի 6-րդ հոդվածում առաջարկվում է «Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1-ին մասում «40-45-րդ մասերով,» բառերից հետո ավելացնել» բառերը փոխարինել «Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1–ին մասում «46-րդ մասերով (բացառությամբ 32-րդ մասով նախատեսված արարքներից որևէ մեկը կրկին կատարելու մասով),» բառերից հետո լրացնել» բառերով: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 25 10 2023թ ՀՀ Ազգային ժողովի կողից ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը, որով նոր խմբագրությամբ է շարադրվել ճանաչվել Օրենսգրքի 244.7-րդ հոդվածը: 2 Նախագծի 6-րդ հոդվածում կատարվող փոփոխության հետ	Ընդունվել է Հոդվածը խմբագրվել է: Համարակալումը վերանայվել է:	Ընդունվել է

			կապված՝ վերանայել նաև համարակալումը:		
11	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 7-րդ և 8-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 7-րդ՝ 1) հոդվածը վերնագրել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի դրույթները: 2) հոդվածը լրացնել նոր 1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:» Հաշվի առնելով, որ օրենքի ուժի մեջ մտնելը փոխկապակցված է նախագծի 7-րդ հոդվածով նախատեսված Կառավարության որոշման ընդունման հետ, իսկ վերջինս ընդունվելու է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում, նախատեսվել է, որ օրենքն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: Այս համատեքստում օրենքի գործողությունը դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա տարածելու մասին նշումը չի լուծում որևէ ինքնուրույն խնդիր: Հարկ է նկատի ունենալ, որ նախագծի ընդունումից հետո հաշվետվություն ներկայացնելու	Ընդունվել է Հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է

			վերաբերյալ նոր դրույթները տարածվելու են ոչ միայն պետության հետ նոր իրավահարաբերությունների մեջ մտնող, այլ նաև արդեն իսկ համապատասխան իրավահարաբերությունների մեջ գտնվող կազմակերպությունների նկատմամբ: Բացի այդ, առաջարկվում է վերանայել 7-րդ հոդվածի մասերի համարակալումը: 3) հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված Կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:» Անցումային դրույթներում նոր 3-րդ մասի սահմանումը վերաբերում է նոր կառավարության որոշման ընդունմանը, որի ընդունման համար նախատեսվել է վեցամսյա ժամկետ՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:		
«Նյութական պահուստի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	«Նյութական պահուստի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «լրացումներ» բառից առաջ առաջարկվում է լրացնել «փոփոխություն և» բառերը, քանի որ նախագծում բացի լրացումներից կատարվում է նաև փոփոխություն:	Ընդունվել է Նախագծի վերնագրում «լրացումներ» բառից առաջ լրացվել են	Ընդունվել է

				«փոփոխություն և» բառերը:	
2.	ՀՀ կառավարություն	«Նյութական պահուստի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (1-ին հոդված)	1. Նախագիծը լրացնել նոր 1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ # **«Հոդված 1.** «Նյութական պահուստի մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-129-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝ 1) 3-րդ մասի 2-րդ պարբերությունում «նշանակության գույքի» բառերը փոխարինել «արտադրատեսակի» բառով, 2) 4-րդ մասում «մինչև մարտի 15-ը» բառերը փոխարինել «մինչև փետրվարի 1-ը» բառերով:»: Առաջարկությունը պայմանավորված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում կիրառվող հասկացություններին համապատասխանեցնելու, ինչպես նաև՝ Լիազոր մարմնի կողմից համապատասխան տեղեկատվությունը առավել սեղմ ժամկետներում ստանալու նպատակով: 2 # համարակալումը վերանայել՝ պայմանավորված առաջարկվող լրացվող հոդվածով:	Ընդունվել է 1"Նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով: 2"Համարակալումը վերանայվել է, 1-ին հոդվածը դարձել է 2-րդ հոդված, 2-րդը՝ 3-րդ, իսկ 3-րդը՝ 4-րդ:	Ընդունվել է

3.	ՀՀ կառավարություն	«Նյութական պահուստի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (1-ին հոդված) նոր 2-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածում (նոր խմբագրված 2-րդ հոդված)՝ «Հոդված 1 «Նյութական պահուստի մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-129-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)» բառերը փոխարինել «Հոդված 2 # Օրենքի» բառերով, իսկ «բառերը» բառը փոխարինել «նախադասությունը» բառով:	Ընդունվել է Հաշվի առնելով, որ նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով, նախագծի 1-ին հոդվածը վերախմբագրվել է 2-րդ հոդվածի հետևյալ բովանդակությամբ" **«Հոդված 2.** Օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասում «ներկայացնում» բառից հետո լրացնել «էլեկտրոնային» բառը, իսկ «վերաբերյալ:» բառից հետո լրացնել «Էլեկտրոնային հաշվետվության համակարգն ապահովում է փաստաթղթաշրջանառության գաղտնիությունը:» նախադասությունը:»:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	«Նյութական պահուստի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (2-րդ հոդված) նոր 3-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում (նոր խմբագրությամբ 3-րդ հոդված) «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերն առաջարկվում է փոխարինել «Կառավարության» բառով՝ հիմք ընդունելով Հայաստանի	Ընդունվել է Նախագծի 2-րդ (նոր խմբագրությամբ 3-րդ հոդված) հոդվածում «Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է

			Հանրապետության Սահմանադրությամբ և «Նյութական պահուստի մասին» օրենքում կիրառված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդված 1-ին և 2-րդ մասերում սահմանված իրավադրույթները, մասնավորապես՝ «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:	կառավարության» բառերը փոխարինվել են «Կառավարության» բառով:	
5.	ՀՀ կառավարություն	«Նյութական պահուստի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (3-րդ հոդված) նոր 4-րդ հոդված	Նախագծի 3-րդ (նոր խմբագրությամբ 4-րդ հոդված) հոդվածի համարակալումը վերանայել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի դրույթները: «**Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1"Սույն օրենքն ուժի մեջ է մտնում էլեկտրոնային հաշվետվություն ներկայացնելու համակարգի գործարկման հաջորդ օրը:	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածը վերախմբագրվել է և նախատեսվել է 4-րդ հոդվածով՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ:	Ընդունվել է

			2"Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված էլեկտրոնային հաշվետվություն ներկայացնելու համակարգը կգործարկվի մինչև 2024 թվականի հունիսի 1-ը:»: Էլեկտրոնային հաշվետվություններ ներկայացնելու համակարգի գործարկումը նախատեսվել է մինչև 2024 թվականի հունիսի 1-ը՝ հաշվի առնելով համապատասխան էլեկտրոնային համակարգի ներդրման մեծածավալ աշխատանքները:		